

ISSN 0135-0536

Պատմաբանութեան  
Հանդիսական  
Историко-Филологический Журнал

3

2012

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԶԳԱՎԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պատրիարքական  
ՀԱՅՈՒ  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2012, 3 (191)

---

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2012 ԵՐԵՎԱՆ

Համեսը լույս է տեսնում 1958 թվականից  
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года  
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Գ լ ի ս պ ո ր ի մ բ ա շ գ ի ր ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ մ բ ա շ գ ր ա կ ա ն ի ս ո ր ի ո ւ դ

ՍԵՐ ԱՐԵՎԵՏԱՏՅԱՆ, ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ,  
ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, ԷԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,  
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ

Գ լ ի ս. Խ մ բ ա շ գ ր ի տ ե ղ ա կ ա ն  
պ ա տ ա ս ի ս ա ն ա տ ո ւ ր ա տ ո ւ ն ա ր պ ա տ ա ս Ա Ն Ո Ւ Ծ Ա Վ Ա Ն Զ Ա Ք Ա Ր Յ Ա Ն

Г л а в н ы й р е д а к т о р САРГИС АРУТЮНЯН

Р е д а к ц и о н на я к о л л е г и я

СЕН АРЕВШАТИАН, АЭЛИТА ДОЛУХАНЯН,  
АЗАТ ЕГИАЗАРЯН, ГЕНРИК ИОАННИСЯН, САМВЕЛ МУРАДЯН,  
ЛАВРЕНТИЙ ОВАНЕСЯН, ПАВЕЛ ЧОБАНИЯН

З а м . г л а в н о г о р е д а к т о р а ,  
о т в е т с т в е н н ы й с е к р е т а� ь      А Н Ա Շ Ա Վ Ա Ն Զ Ա Կ Ա Ր Յ Ա Ն

## ՈՒՐՎԱԿԱՆ-ԳՈՌՆԱՓԵՏԻԿՆԵՐԻ ԴԱՎԱՏԱԼԻՔԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

### ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Հայ ժողովրդական հավատալիքներում և ոգեպաշտական զրույցներում բարի ու չար ոգիների հետ հանդիպում ենք ուրվականների մասին պատմող բազմաթիվ բանահյուսական ու ազգագրական նյութերի:

Մեռելների հոգիների կերպարանափոխված արարածներին ժողովուրդն անվանում է գոռնափշտիկ (Շիրակ, Արարատ, Բաղեց, Սասուն), խորդլախ (Մալաթիա) կամ խորթլաղ (Արցախ, Նոր Նախիջևան, Համշեն<sup>2</sup>, Գանձակ Պապեն, Մարզվան), գոռնադաբ (Վան, Բալու) կամ գոռնաթափ (Կարին) նաև՝ զառադուռա (Մալկա)<sup>3</sup>:

Հայ ժողովրդական հավատալիքների համաձայն՝ թաղված մեռելների հոգիները հաճախ դուրս են զալիս գերեզմաններից, և որպես ուրվականներ մարդակերպ և կենդանակերպ<sup>4</sup>, շան<sup>5</sup>, կատվի<sup>6</sup>, գառնուկի<sup>7</sup>, գայլի, արջի<sup>8</sup>, այծի<sup>9</sup>, ուլի<sup>10</sup>, ավանակի<sup>11</sup>, աղվեսի<sup>12</sup>, գորտի<sup>13</sup>, նորածին երե-

<sup>1</sup> Հոգեգիշ, մեռելի ուրվական, թուրքերեն՝ xortlak. — տե՛ս Էմինյան ազգագրական ժողովածու (այսուհետ՝ ԷԱԺ), հ. Գ, թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ, գրեց ՀՀ ճառյան, Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 196:

<sup>2</sup> Համշենում հավատում էին, որ խորթլաղը մարդկանց աչքին երեք տեսակ է երեսու մարդու, չան կամ կատվի ձևով, և ամենավտանգավորը մարդակերպ երեացողն է լուսն ՅՄ ուրագյան ց. Համշենցի հայեր. — Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գիրք Զ Թիֆլիս, 1900, էջ 141:

<sup>3</sup> «Հառադուռաներ (ուրվականներ) կան, որոնք ստանալով կենդանիների կերպարանք հետապնդում են ճամփորդներին: Ասում էին՝ զառադուռաները մարդուն փաթթել են, հայածում են: Հավատացած էին, որ զառադուռաները թուրքերի կոռոներից (գերեզմաններից են դուրս զալիս և ընկնում մարդկանց հետակից ու վախեցնում: որի հետևանքով մարդիկ հիվանդանում էին» (Հ. Ա. Միքայելյան. Մալկայի հայերի ազգագրությունն ու բանահյուսությունը, Երևան, 1998, էջ 148):

<sup>4</sup> С. Арутюняն. Горнапштикнер, горнадапнер, хортлакнер. — Мифы народов мира, т. 1. М., 1987, с. 316.

<sup>5</sup> Ա. Արքա թարյան ց. Փշրանք Շիրակի ամբարներից. — ԷԱԺ, հ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 173, Ե. Լալայան. Երկեր (այսուհետ՝ ԵՀ), հ. 2, Արցախ, Երևան 1988, էջ 435, Ա. Աթայան. Սալմաստ, Նոր Ջուղա (այսուհետ՝ ԱԱՍ), 1906, էջ 153, 173:

<sup>6</sup> Գ. Մրգան ճայանց. Երկեր, հ. 1, Մանանա (այսուհետ՝ ԳՄՄ), Երևան, 1978, էջ 147:

<sup>7</sup> Ա. Ալայան ճայան. Պատմություն Մալաթիու հայոց (այսուհետ՝ ԱՊՄ), Պեյրութ 1961, էջ 1150:

<sup>8</sup> Մ. Աբեղյան. Երկեր (այսուհետ՝ ՄԱԵ), հ. Է, Երևան, 1975, էջ 18:

<sup>9</sup> Խ. Սամվելյան. Հայ ընտանեկան պաշտամունքը. — ԱՀ (այսուհետ՝ ԽՍԱՀ), գիրք XII, Թիֆլիս, 1905, էջ 215:

<sup>10</sup> «Զայն համշենական», 2012, № 3-4, մարտ-ապրիլ, էջ 8:

<sup>11</sup> ԱՊՄ, էջ 1150:

<sup>12</sup> «Հետո կպագմեին, օր գոռնափշտիկ կար: Էղիկ, կըսեին, թուրքի մեռելը կեղնի դռնափշտիկ: Մեր գեղը (Աշոցքի Զիփթալի, այժմյան Զույգաղբյուր գյուղ) որսորդըմ կար էսիկ աղվեսի տեղակ շալգե բերեգը մե հաղըմ բան, դընեզը իրա շվաքը: Առավոտ գելնի օր մեռել է: Նորից շալգե տանիդը հոն ուրդից օր բերել է: Էնքան է, կըսե, ծանդըու է, օր աստվածինքը ինայն» (Դաշտային ազգագրական նյութ (այսուհետ՝ ԴԱՆ), Շիրակ, 2005 բանասաց Միթթարյան Բեգզադ, ծնվ. 1929թ.):

<sup>13</sup> 1963 թ. Շիրակի մարզի Բանդիվան գյուղի բնակիչ Հրանուշ Բաղալյանը երեկոյան դրսում լվացք փոելիս տեսել է, որ իր գիմաց կանգնել է գոռնափշտիկ՝ մերկ մարդու տես-

խայի<sup>14</sup> կերպարանք ընդունած կանգնում են մարդկանց առաջ, վախեցնում նրանց: Այդ հոգիները կարող են երևալ ոչ միայն իրենք ուրվականներ, այլև գերեզմանների վրա լուսի ցոլքեր, բոցեր, կրակներ<sup>15</sup>: Երբեմն էլ լրիկ մերկ մարդկանց կերպարանքով ցատկում են անցորդների մեջքին կամ նստում ձիավորների գավակին: Այս ուրվականների վախից մարդիկ հիվանդանում են<sup>16</sup>: Հստ զիբակցիների «մարդու վնաս չեն տա, ետեւից կը նկնին խելոք կերթան»<sup>17</sup>, իսկ Մալաթիայում կարծում էին, որ «բռնած հայր կիսեղեր»<sup>18</sup>:

Գոռնափշտիկ քրդերեն նշանակում է գերեզմանի կատու, այն «շրջմոլիկ հուրն է: Շրջմոլիկ հուրն երբեմն չար ոգի կսեպվեր, անհանդարտ, շրջուն հոգի, որ անցորդներու ետևեն կիյնար՝ ուզելով զայն գլխե հանել: Այս հատկությամբ կկոչչի նաև դեի ծառա, դրողի զգիր: Գերեզմանատան մը մեջ տեսնված է տապանաքար մը երկու տեղե բնեռձված՝ գոռնափշտիկը կաշկանդելու համար»<sup>19</sup>:

Ուրվական-գոռնափշտիկը հայ ժողովրդական հավատալիքներում և ոգեպաշտական զրույցներում ամենատարածված ոգիներից է, ինչպես քաջքը, ալքը, սատանան և այլն:

Ազգագրական գրեթե բոլոր շրջաններում ուրվականների մասին պատմող զրույցներում հանդիպում ենք հիմնականում նույն սյուժեին. անցորդը երեկոյան կամ գիշերով մահմեղականի կամ թուրքի գերեզմանատան մոտով անցնելիս հանդիպում է ինչ-որ կենդանու շան, կատվի, աղվեսի և այլն, տանում է տուն և առավոտյան կենդանու փոխարեն իրենց գոմում, բակում, տանը տեսնում է մեռելի: Հասկանում է, որ հանդիպել է գոռնափշտիկի: Զրույցներից մեկում գյուղացին ճանապարհին կատվի ձագ է տեսնում, վերցնում է, որ տա տիրոջը: Կատվի ձագը մեծանում, դառնում է «ղազար (պղտիկ շուն), դե՛, դե՛, կըլնի քանձ թազի (բարակ շուն) մը, դե՛, դե՛, դե՛, կըլնի քանձ էշ մը: Մեկ էլ ի՞նչ տիսնա, գո մորե մերկ մարդ մը էշե, հեծե ուր իշու թարքին: ... չում գողու ժամեր կը զարնեն, գոռնազար կը խափանվի»<sup>20</sup>:

Հստ ժողովրդական պատկերացումների՝ խորթլամիշ<sup>21</sup> են լինում ինքնասպան<sup>22</sup> եղած մարդիկ և հատկապես թուրքի մեռելները<sup>23</sup> (Հայի Հաց

<sup>14</sup> Քով ու գորտի կերպարանքով (ԴԱՆ, Շիրակ, 2012, բանասաց Համբարձումյան Օֆելյա, ծնվ. 1972 թ. Բանդիվանում, ՀՀ Բագալյանի գուստըն է):

<sup>15</sup> «Մորքուրիս տղեն շոփեռ էր: Գուկա մեր գերեզմընների կողքեն կանցնի, կաշե, օր բան կա շաշին, էրեխի բալուլ: Աշես, կըսե, ով է բիջ բերե, դրե ըստեղ: Կերթա մորը կըսէ, քելե աչքովդ տես, թե չէ դու չես ավդոնա: Մորքուրս գլխու կընգնի, օր ըսօր գոռնափշտիկ է ղեմն ելե, էլ չի թողնի էրթա» (ԴԱՆ, Շիրակ, 2009):

<sup>16</sup> «Բյուրակն» (4. Պոլիս), 1899, №16:

<sup>17</sup> ՄԱԵ, էջ 18:

<sup>18</sup> էԱԺ, էջ 173:

<sup>19</sup> ԱՊՄ, էջ 1150:

<sup>20</sup> «Բյուրակն», 1898, №24, էջ 462–463:

<sup>21</sup> ԳՍՄ, էջ 147:

<sup>22</sup> ԽՍԱՀ, էջ 215:

<sup>23</sup> Ինքնասպան եղած մարդկանց մասին վկայում է հնույալ քառատողը. «Վախենում եմ, չեմ քնանում, քույրիկ, լսիր պատմածիս,

Մի մարդ իրան սպանել է՝ մեկ անգամ մենակ մնալիս,

Ընտանիքը անտեր մնաց, բայց ասում են ինքնասպան»

Սե շուն դարձած ամեն գիշեր՝ ալցելում է բակն յուր տան» (Հովհաննես Կոստանդնուպոլիս, 1896, էջ 71):

<sup>24</sup> Ասում են՝ թե որ թուրքն իր կյանքում գոնե մեկ անգամ հայ տերտերի օրհնած հաց կերած լինի, «խորթլաղ» չի դառնալ (ԱՀ, գիրք Զ, էջ 141):

չկերած թուրք մեռելը<sup>24</sup>): Շիրակում հավատում էին, որ «հավատամքն» ու «փառքիրարձումը» թուրքերը չեն ըսի, ըտուց է, որ գոռնափշտիկ կեղ-նին»<sup>25</sup>:

Հավատալիքային նմանատիպ պատկերացումներից ելնելով՝ կարելի է պատճառաբանել մեռելների պաշտամունքի հետ կապված այնպիսի դրսերումներ, ինչպիսիք են պաշտամունքի առանձնահատուկ արարողությունները մինչև թաղումը, թաղման հաջորդ օրը, յոթին, քառասունքին, թաղումից մեկ տարի անց և հատկապես եկեղեցական տաղավար տոներին հաջորդող հիշատակի արարողությունները։ Այսինքն՝ հայի համար չափազանց կարեոր է հարազատ հանգուցյալի նկատմամբ տարվող խնամքը։ Ժողովրդի պատկերացմամբ՝ նմանօրինակ խնամքից զրկված հոգիները դառնում են ուրվականներ, չըջում ամենուր:

Խորթլաղի, գոռնադաբի կամ գոռնափշտիկի հավատալիքը գոյություն է ունեցել հին և միջնադարյան հայերի մեջ։ Գերեզմանից դուրս եկող այս ոգու ժաման հիշատակում է Առաքել Դավիթեցին իր պատմության մեջ։ Այսպես, պատմիչը գրում է. քրիստոնյա ծնողների զավակ Ղարաչորակը մահամերձ վիճակում խնդրում է իր մոտ բերել մոլլա ու մուղը (Ղուրան կարգացող), նրանց միջոցով ուրանում է Քրիստոսին ու դառնում մահմեդական։ «Ինչպես որ չորս օր ուրանալուց հետո սատկեց Ղարաչորակը այսպես էլ իր թաղումից չորս օր հետո երեկոյան ժամին տեսան Ղարաչորակ ուրացողին, որին մահմեդականները թաղեցին. քանզի եկել էր վիճից որտեղ թաղված էր, մերկ ու խայտառակ, գարշատեսք, այլակերպ, իբրև կատաղի շուն իր պատանը գցած ուսերին քաղաքի միջով գալիս էր, շուրկայում և կրպակում շրջում էր, իսկ ովքեր տեսնում էին, սարսափած ահաբեկում էին, քանզի բոլորը ճանաչում էին նրան։ ... Զինակիր մարդիկ հասան այն տեղը (գերեզմանափոսին), սրով խողխողեցին նրան, գլուխը կտրեցին, այլ հեռագոր տեղ կորցրին։ Այս ձեռվ չարը վերացավ մեջտեղից իսկ բոլոր այլազգիները սկսեցին հայհոյել ուրացող Ղարաչորակին և վկայում էին, որ քրիստոնեական հավատքը ճշմարիտ է։ Եվ այս ամենը արեց սատանան, որ խախտի քրիստոնեական հավատը»<sup>26</sup>:

Խ. Սամվելյանը գտնում է, որ «այս հավատալիքի մեջ պետք է տեսնել մասսամբ հոգեհածության (metempsichose) գաղափարը, այսինքն՝ հոգիների կերպարանափոխվելը զանազան շնչափոր և անշունչ առարկաների»<sup>27</sup>:

Մեռելների հոգիների գերեզմանից դուրս գալը մի ընդհանրացած հավատալիք է և տարածված է աշխարհի գրեթե բոլոր (գերմանացիներ, հույներ, հնդիկներ, եգիպտացիներ, եզդի քրդեր և այլն) ժողովուրդների կրոնական և ոգեպահատական պատկերացումների մեջ։ Եղջի քրդերը կարծում էին, թե շատ մեղքեր գործած, այլոց հաշվին ապրող հարուստ, ժլատ և դաժան մարդու հոգին ոգի է դառնում, կենդանիների կերպարանքով երեսում

<sup>24</sup> ԱԱՍ, էջ 153:

<sup>25</sup> ԷԱԺ, էջ 173:

<sup>26</sup> Առաքել Դավրի ժեցի. Պատմություն, Երևան, 1988, էջ 432–435:

<sup>27</sup> ԻՍԱՀ, էջ 215:

և վախեցնում է մարդկանց: Կերպարանափոխված նման ոգիներին անվանում են գոռնափշտիկ, որը երևում է մեւ աղվեսի կերպարանքով<sup>28</sup>:

Հետեւյալ զրույցում էլ գոռնափշտիկը կատվի տեսքով է հանդես գալիս.

Լույս գիշեր է, մտա թուրքի գերեզմանոց:  
Տեսնեմ՝ քարին նստած մի շարմաղան աղջիկ:  
Սա մեր կնքված լեզվով՝ Օհան արի իմ ծոց,  
Ես՝ խաչ, սա՝ մյա՛ու, դարձավ գոռնափշտիկ<sup>29</sup>:

Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններից գրառած ողեապաշտական զրույցներում գոռնափշտիկ ոգին կամ ուրվականը մեծ մասամբ հանդիպում է շան տեսքով<sup>30</sup>: Գանձակում գրառված զրույցներից մեկի համաձայն՝ մահմեղականների գերեզմանների մոտից վերցված փոքրիկ շունը առավոտյան դարձել է մահմեղական փոքրիկ երեխայի դիակ<sup>31</sup>:

Ինչ վերաբերում է հատկապես նորածինների մեջ մտած գոռնափշտիկ ոգուն, կարծում ենք, դա կարելի է բացատրել դեռևս համապատասխան ծիսական արարողություններով դրոշմ և կնունք չունենալու հետ:

Հստ շիրակցիների հավատալիքային պատկերացումների՝ «Ձրից որ անցար՝ էլ հրամանք Ասսու չէ, (գոռնափշտիկները) չեն կրնա ետեիցդ գա, կմնան վնասաւալով»<sup>32</sup>: Ինչպես վկայում է Ս. Հարությունյանը, ջուրը, գետը, առուն հանդես են գալիս իբրև սահման այս և այն աշխարհի միջեւ, այսինքն՝ կերպարանափոխված ոգիները չեն կարող անդրաշխարհից անցնել այսրաշխարհ<sup>33</sup>: Այսպես, «... Լդոնցից, յա ջուր ռաստ գալով պտի պրծնիս, յա թե չէ՝ բահով պտի գարկես՝ գլուխը կտրես<sup>34</sup>, ջամդաքի ու գլխի արանքով իրեք հեղ էսքով էնքով անցնիս ու ըսես.՝ «Աստված քու գործքովդ քեզի տա, գնա ընծեն ռադ էղի, որ նոր խլսիս. թե որ չէ՝ քեզնից վազ էկողը չեն...»<sup>35</sup>:

Երկատված շան մեջտեղից անցնելու արարողությունը, ըստ գիտնականներ Ռ. Մմիթի և Զ. Ֆրեյզերի, հետապնդել է ծիսական հանդիսավոր մաքրագործման կամ, առավել որոշակի՝ պահպանության նպատակներ<sup>36</sup>:

<sup>28</sup> Ա մինե Ա վ դ ա լ. Եղդի քրդերի հավատալիքները, Երևան, 2006, էջ 49:

<sup>29</sup> <http://www.shirakcentre.org/>

<sup>30</sup> Զրույցներում հանդիպող փոքրիկ շունը, այսինքն՝ գոռնափշտիկը, մահացած փոքրիկ երեխս է, իսկ մեծ շունը տարեց մարդ կամ կին: Այստեղից էլ գալիս է զառամյալ, խիստ ծերացած, հալից ընկած մարդուն փոխարերական իմաստով տրվող գոռնափշտիկ անվանումը (Համշեն), քավթառ շուն (Ղարաբաղ), քյոփակ (Թրք. շուն) (Ծիրակ), իսկ Մերաստիայում գոռնափշտիկը չար պառավներին տրվող անարդական անուն է (Հայոց լեզվի բարբառային բառարան, Հ. Բ, Երևան, 2002, էջ 361):

<sup>31</sup> ԱՀ, գիրք Զ, էջ 352:

<sup>32</sup> ԷԱԺ, էջ 173:

<sup>33</sup> Ա. Հարությունյան. Հայ առասպելաբանություն (այսուհետ՝ ԱՀԱ), Բեյրութ, 2000, էջ 424:

<sup>34</sup> Գլուխը գիտակցության, պայծառ մտածողության խորհրդանիշն է: Գլուխը կարելով խախտվում է զգացականության ու մտածողության ամբողջականությունը (տե՛ս Փրկչեալ Անդ. Образный язык народных сказок. М., 2000, с. 311):

<sup>35</sup> ԷԱԺ, էջ 173:

<sup>36</sup> ԱՀԱ, էջ 427:

Վանում նույնպես հավատում էին, որ «գոռնադաբները բահով կամ փայտով մինչև գլուխները չկտրես, անհետ չեն լինիր»<sup>37</sup>: Արցախում էլ, եթե կամենում են, որ դրանք դադարեն կերպարանափոխվելուց, դիակ դարձած միջոցին կտրում են դրանց գլուխները<sup>38</sup> և զնում ոտների տակ ու այդպես տանում թաղում, և կամ մոլլան խաչակնքում է գերեզմանը<sup>39</sup>:

Սակայն գոռնափշտիկին չպետք է շփոթել հանգուցյալի վերադարձող հոգու հետ, չնայած երկուսն էլ ունեն գործառութային որոշ նմանություններ: Մի զրույցի համաձայն՝ մահմեգականի տանը գիշերող հայը տեսնում է, որ տանտիկինը քնելուց առաջ մի մեծ աման կերակուր է դնում օջախի մոտ և ասում, որ իր սկեսրայրի համար է: Հայը տեսնում է՝ որ գիշերը մի ծեր շուն գալիս է, կերակուրն ուտում ու գնում: Առավոտյան տանտիկնոջից իմանում է, որ գիշերը եկողը սկսերայրն է եղել՝ շան<sup>40</sup> կերպարանքով<sup>41</sup>: Այս զրույցում արծարծվող հավատալիքը (մարդը շան կերպարանքով այցելում է իր հարազատ օջախ) բխում է վաղնջական ժամանակներից եկող շան պաշտամունքից: Շունը, լինելով մարդուն հավատարիմ կենդանի, ինքնըստինքյան դասվում է տոտեմների շարքը, որոնք նախնական մտապատկերներում ներկայացնում էին իբրև ցեղական կամ տոհմային նախահոր կերպարանափոխած կամ այդ կենդանու մեջ ապաստանած մեռյալի հոգին: Հետեւապես, շունը համարվում էր մարդկային հոգի ունեցող և այդպիսի «հոգի տվող»<sup>42</sup>: Հայ ժողովրդական հավատալիքներում շունը մահվան անձնավորումներից մեկն է:

Գերեզմանից դիակը դուրս բերելու և մասնատելու սովորույթը կապված է ժողովրդական մեկ այլ հավատալիքի հետ: Ընտանիքի տարեց անգամի ժամկից հետո, երբ որեւէ մեկը հիվանդանում էր, կարծում էին, թե հանգուցյալն է պատճառը և մինչև մեկից յոթ հոգի չտանի իր հետեւից, չի հանգստանա: Ուստի, բացում էին գերեզմանը, գլուխը մարմնից անջատում կամ ջարդում էին, սրտի ու գլխի մեջ մեխ խրում ու նորից հուղարկավորում<sup>43</sup>: Կարծում էին, որ այդպիսով դժոնում են իրենց հիվանդ հարազատին բուժելու ելքը: Դիակի նկատմամբ բռնություն գործադրելով՝ ցանկանում էին վերացնել մարմնից դուրս եկած ինչ-որ հոգու չար ներգործությունը:

Զանգեզուրում էլ, եթե ննջեցյալը շարունակ երևում էր տանեցիների երազում, գնում էին գերեզմանատուն և նրա գերեզմանի մեջ, այնտեղ, որտեղ ենթադրվում էր, թե նրա սիրտն է, ցցում էին սուր փայտե ցից: Միրտը խողխողելով՝ պիտի վերջ տրվեր նրա կարոտին, վերջնականապես նա հան-

<sup>37</sup> ԳՍՄ, էջ 148:

<sup>38</sup> Խորթլաղից ազատվելու համար Համշենում կարծում էին, որ դրանց պետք է մորթել երկաթի կոթ ունեցող դանակով, մակույկի թիով և կամ մանգաղով (ԱՀ, գ. Զ, էջ 141):

<sup>39</sup> ԵԼԵ, էջ 435:

<sup>40</sup> «Հունական առասպելաբանության մեջ ստորերկրյա աշխարհի հետ կապված Հեքատե դիցուհին պատկերացվում էր սև շան կերպարանքով, որն այս ու այն աշխարհում իրենց հանդիսաց չգտած մեռելների շնակերպ հոգիների ոհմակով շրջապատված շրջում է գերեզմանոցների մերձակայքում և ահ ու սարսափ տարածում» (ՈՀԱ, էջ 420):

<sup>41</sup> ԵԼԵ, էջ 435:

<sup>42</sup> Խաչիկ Սամվելյան. Հին Հայաստանի կուտուրան, Պատմական ակնարկներ, Հ. 1, Քարե դար, Երևան, 1931, էջ 190:

<sup>43</sup> ՄԱԵ, էջ 18:

գիստ առներ ու թաղած տեղից այլես չգար, չշրջեր և տանեցոց չայցելեր»<sup>44</sup>:

Հնտանիքի համար թանկ ու հարազատ և, մանավանդ, ջահել հանգուցյալի մարմնի նկատմամբ բռնության կիրառման մասին նյութեր չեն գրանցվել: Այդ հավատալիքն առավելապես հյուսվում է ծեր, անծանոթ և հատկապես օտար, այլազգի հավատացյալների, չարագործների, ինքնասպանների գեղքում:

Ստ. Լիսիցյանի կարծիքով՝ «սկզբնական ժամանակաշրջաններում գերեզմանի վրա քար ձգելը ոչ թե կատարվում էր թաղման տեղը անկորուստ պահելու, այլ քարի ծանրությամբ հանգուցյալի դուրս ելնելը դժվարացնելու նպատակով: Այդ նպատակով նախնական գերեզմանները շրջապատված էին լինում քարերի օղակով, որի միջից ննջեցյալ մեռածը դուրս գալ չպիտի կարողանար»<sup>45</sup>:

Հանգուցյալի վերադարձող հոգու մասին ոգեպաշտական զրույցների վերլուծությունը մեզ բերում է այն եղբակացության, որ վերոհիշյալ ոգու նկատմամբ ժողովրդական վերաբերմունքն ունի երկակի բնույթ: մի դեպքում շան (կենդանու) մեջ մտած ոգու նկատմամբ խնամք է տարվում, նրան հետեւում են, գոհացնում, որ տանեցիններին վնաս չհասցնի, մյուս դեպքում նրան երկատում են, գլուխը մարմնից անջատում, որը, հնագույն մաքրագործման ծես լինելով հանդերձ, առավել ուշ ժամանակների համար ընկալվում է իբրև վերադարձող հոգուն պատճելու և հնարավոր չարիքներից ապահովագրվելու միջոց:

Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջաններից գրառած զրույցներից երեսում է, որ գոռնափշտիկը մարդուն կենսական վնաս չի հասցնում, ինչպես, օրինակ, ալքը, քաջքը և այլն, միայն վախ է հարուցում ու որոշակի անհանգստություն պատճելում:

Գոռնափշտիկի և հանգուցյալի վերադարձող ոգու մասին պատմող զրույցներն ուսումնասիրելուց հետո գալիս ենք նաև այն եղբականգման, որ վերջիններս որոշակի նմանություններ ունեն արտաքին հատկանիշների փոխատեղման առումներով, սակայն իիստ տարբերվում են իրենց բնույթով: Երկուսի դեպքում հիմնական նմանությունները կերպարանափոխության (հայտնվում են կենդանիների, հիմնականում՝ շան տեսքով) և դրանց երկատման կամ անդամահատման (դրանցից ազատվելու կամ վերադարձը կանխելու նպատակով դիմում էին այդ միջոցներին) մեջ են:

Ելնելով համապատասխան զրույցներից ու ժողովրդական պատկերացումներից՝ կարելի է ասել, որ գոռնափշտիկ են դառնում թուրքի մեռելները, ինքնառապան եղած մարդիկ, չարագործները, չապաշխարած մեղավորները, ոչ պատշաճ ձեռով հուղարկավորված հանգուցյալները, այսինքն՝ քրիստոնեական համապատասխան ծիսակարգերից և սկզբունքներից զրկված հանգուցյալները:

<sup>44</sup> Ստ. Լիսիցյան. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 211:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 215:

## ВЕРОВАНИЯ И ПРЕДСТАВЛЕНИЯ О ПРИЗРАКАХ – ГОРНАПШТИКАХ

АСМИК ГАЛСТЯН

## Резюме

В армянских народных верованиях и анимистических рассказах имеется множество сюжетов о призраках. Согласно этим сюжетам, преобразованных духов покойников народ называет горнапштиком (горнадаб, хортлах, каракура). Последние – духи самоубийц, иноверцев, которые выступают в образе человека или животного (собаки, кошки, волка, медведя, козла, козленка, ишака, лисы). Горнапштики не представляют смертельной опасности для человека, но причиняют беспокойство и страх. В горнапштика превращаются отступники от соответствующих христианских принципов и обрядов.

## BELIEF AND NOTIONS OF GHOST – GORNAPSHTIKS

*HASMIK GALSTYAN*

## Summary

There are a lot of tales about ghosts in the Armenian popular beliefs and animistic stories. Those ghosts are transformed creatures of dead spirits which are called gornapshtiks (gornadab, khortlakh, kharakhura). Gornapshtiks are the spirits of people of other religion, suicides, which appear anthropomorphic and zoomorphic (as a dog, cat, wolf, bear, goat, kid, donkey). They are not dangerous for human life; gornapshtiks only cause trouble and fright. Apostates from relevant Christian principles and rites turn into gornapshtiks.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈՂԿԱԾՆԵՐ – ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

#### I

|  |    |
|--|----|
| Կահագն Գրիգորյան – Մայր տաճարի հնագույն երեք քանդակների թվագրման<br>խնդիրը .....   | 3  |
| Հրանտ Աբրահամյան – 1918–1920 թթ. աղցախսահայության համագումարների<br>ժողովրդավարությունը .....  | 21 |
| Ավետիս Չարությունյան – Վասպուրականի նահանգային ինքնավար կոմիսարու-<br>թյան (Երկրորդ կառավարության) գործունեությունը .....                  | 37 |
| Կարեն Խաչատրյան – Ռազմապաշտպանական արդյունաբերության ծևավորման<br>նախադրյալները Խորհրդային Չայաստանում (1920–1930-ական<br>թվականներ) ..... | 53 |
| Եսթեր Խեմչյան – Տավուշի բանասացության պատմությունից .....  | 66 |

#### II

|   |     |
|---|-----|
| Աննա Արևշատյան – Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությունը .....  | 78  |
| Գագիկ Գ. Սարգսյան, Շուահիկ Մելքոնյան – Վիմագործիտական էսքիզներ – 2 .....  | 94  |
| Շամիկ Ղավթյան – Կուկին Յուսիսային Գուգարքի տեղանունների հարցի շուրջ ...   | 120 |
| Վագգեն Շամբարձումյան – Շայերենի և միլերենի ծագումնային առնչությունների<br>հարցը .....                           | 127 |
| Լուսինե Շայրիյան – Ավետիք Խահակյան հեքիաթագիրը .....  | 147 |
| Մնահիտ Յահյամասիհի (Թեհրան) – Կոմիտասի մշակած ժողովրդական մի երգի<br>սրձագանքը իրանական բանագիտության մեջ ..... | 156 |
| Շասմիկ Գալստյան – Ռուվական-գոռնափշտիկների հավատալիքը և<br>պատկերացումները .....                                 | 162 |
| Նարինե Շամամյան – Շինայադրման արարողության խորհուրդը հայոց<br>հարսանեկան ծիսակարգում .....                      | 169 |

### ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

|  |     |
|--|-----|
| Ենմա Պետրոսյան – Սրբազն ժայռեր Սիփան և Սիպիլ (Իշպիլե) (ռուս.) .....  | 179 |
| Սամվել Լ. Գրիգորյան (Մոսկվա) – Սմբատ Գունդատարլի Տարեգրքի թագաղոռ-<br>թյան ցանկ. Իշխանն Սիմանակային՝ Սիրուիի (ռուս.) ..... | 198 |

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

|   |     |
|---|-----|
| Կամո Ալեքսանյան – Յուրիկ Մուրադյան. Քաղաքակրթությունների աշխար-<br>հագրություն .....  | 211 |
| Անուշավան Զաբարյան – Շայ-ուկրաինական, հունգարական և մոլդովական<br>հարաբերությունների պատմությունից (հողվածների և նյութերի<br>ժողովածու) (ռուս.) ..... | 213 |

---

|  |
|--|
| Համո Սուքիասյան – Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ<br>միավորելու հաճար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու ..... 217        |
| Հասմիկ Փիլիպոսյան – Արարատ Աղասյան. Սիմվոլիզմը և Մարտիրոս Սարյանի<br>ստեղծագործությունը ..... 220  |
| Գուրգեն Կարապետյան – Անուշավան Զաքարյան. Սերգեյ Գորոդեցկու թիֆլիսի<br>«Բանաստեղծների համբարությունը» և «Ակմե» ժողովածուն (ռուս.) ..... 226 |
| Արմեն Կարապետյան – Յ. Ս. Հարությունյան. Նոր Բայազետի գավառը 1914–<br>1920 թթ. ..... 229  |
| Հենգել Սամուչարյան – Ալեքսանդր Սաֆարյան. Զիյա Գյոքալփը և «Թյուրքա-<br>կանության հիմունքները» ..... 233                                     |

### ՄԵՐ ՅՈՒԹԵԼՅԱՐՆԵՐԸ

|  |
|--|
| Աշոտ Մելքոնյան, Պավել Չոբանյան – Ակադեմիկոս Վլադիմիր Բախչիի Բարիու-<br>դարյան (ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության<br>65-ամյակի առթիվ) ..... 236 |
| Ոոբերտ Թողմանյան – Արտեմ Սարգսյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) ..... 240  |

### ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

|  |
|--|
| Աելիտա Դոլուխանյան – Անվանի գրականագետը (Եղիշե Պետրոսյանի ծննդյան<br>100-ամյակի առթիվ) ..... 244 |
|--|

### ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

|  |
|--|
| Արմեն Պետրոսյան – «Հայկական էպոս և համաշխարհային էպիկական<br>ժառանգությունը» չորրորդ միջազգային գիտաժողովը ..... 248   |
| Արտակ Մաղալյան, Համո Սուքիասյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի<br>երիտասարդ գիտաշխատողների XXIX գիտական նստաշրջանը<br>(նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանի 85-ամյակին) ..... 250 |
| Մարգարիտա Քամայան – Երիտասարդ արվեստաբանների գիտական յոթերորդ<br>նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխանյանի ծննդյան 175-ամյակին ..... 255   |
| Ռոման Շովկեվիչ, Սաքենիկ Սկրտցյան, Համբետ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ<br>հնագիտության և ազգագրության ինստիտուտի երիտասարդ գիտնական-<br>ների 13-րդ միջազգային գիտաժողովը ..... 261                    |
| Աննա Առատրյան – Տիգրան Չուխանյանի կամերային ստեղծագործության<br>վերածնունդը ..... 264  |

## СОДЕРЖАНИЕ

### СТАТЬИ – СООБЩЕНИЯ

#### I

|   |
|---|
| Վագի Գրիգորյան – Вопрос датировки трех древнейших скульптур<br>Кафедрального собора ..... 3 |
| Грант Абраамяն – Демократия съездов арцахских армян в 1918–1920 гг. ..... 21                |

|  |    |
|--|----|
| <b>Аветис Арутюнян – Деятельность областного автономного комисариата</b> |    |
| (второго правительства) Васпуракана .....                                | 37 |
| <b>Карен Хачатрян – Предпосылки формирования военно-оборонной</b>        |    |
| промышленности в Советской Армении (1920 – 1930-е годы) .....            | 53 |
| <b>Эстер Хемчян – Из истории сказителей Тавуша</b>                       |    |
| .....  | 66 |

## II

|  |     |
|--|-----|
| <b>Анна Аревшатян – Музыкальное наследие Григора Магистроса</b>  | 78  |
| <b>Гагик Г. Саргсян, Усик Мелконян – Эпиграфические эскизы – 2</b>   | 94  |
| <b>Гамлет Давтян – Еще раз к вопросу о топонимике Северного Гугарка</b>  | 120 |
| <b>Вазген Амбарцумян – Вопрос о генетических взаимоотношениях армянского и милицайского языков</b>             | 127 |
| <b>Лусине Айриян – Аветик Исаакян – сказочник</b>  | 147 |
| <b>Анаит Ямасии (Тегеран) – Отклик одной народной песни, обработанной Комитасом, в иранской фольклористике</b> | 156 |
| <b>Асмик Галстян – Верования и представления о призраках – горнапштиках</b>                                    | 162 |
| <b>Нарине Шамамян – Символика обряда наложения хны в свадебном цикле армян</b>                                 | 169 |

## ОБСУЖДЕНИЯ

|   |     |
|---|-----|
| <b>Эмма Петросян – Скальные святилища Сипан и Сипил (Ишпиле)</b>  |     |
| (на русском языке) .....  | 179 |
| <b>Самвел А. Григорян (Москва) – Коронационный список Летописи Смбата Гундстабля: Сирии, владетель Симанаклы (на русском языке)</b> | 198 |

## РЕЦЕНЗИИ

|  |     |
|--|-----|
| <b>Камо Александян – Юрик Мурадян. География цивилизаций</b>   | 211 |
| <b>Анушаван Закарян – Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений (сборник статей и материалов) (на русском языке)</b> | 213 |
| <b>Амо Сукиасян – Борьба армянства за присоединение НКАО к Советской Армении. Сборник документов и материалов</b>                          | 217 |
| <b>Асмик Пилипоян – Аарат Агасян. Символизм и творчество Мартироса Сарьяна</b>   | 220 |
| <b>Гурген Карапетян – Анушаван Закарян. Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акмэ» (на русском языке)</b>                 | 226 |
| <b>Армен Карапетян – Г. М. Арутюнян. Ново-Баязетский уезд в 1914 – 1920 гг.</b>  | 229 |
| <b>Гензель Манучарян – Александр Сафарян. Зия Гёкальп и «Основы тюркизма»</b>  | 233 |

## НАШИ ЮБИЛЯРЫ

|   |     |
|---|-----|
| <b>Ашот Мелконян, Павел Чобанян – Академик Владимир Бахшиевич Бархударян (к 85-летию со дня рождения и 65-летию научно-педагогической деятельности)</b> | 236 |
|---|-----|

**Роберт Тохмакян – Артем Саргсян (к 70-летию со дня рождения)** ..... 240

### НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

**Аэлита Долуханян – Выдающийся литературовед (к 100-летию со дня рождения Егише Петросяна)** ..... 244

### НАУЧНАЯ ЖИЗНЬ

**Армен Петросян – Четвертая международная научная конференция «Армянский эпос и мировое эпическое наследие»** ..... 248

**Артак Магалян, Амо Сукиасян – XXXIII научная сессия молодых научных сотрудников Института истории НАН РА (посвященная 85-летию академика НАН РА В. Б. Бархударяна)** ..... 250

**Маргарита Камалян – Седьмая научная сессия молодых искусствоведов, посвященная 175-летию со дня рождения Тиграна Чухаджяна** ..... 255

**Роман Овсепян, Сатеник Мкртчян, Гамлет Мелкумян – 13-я международная конференция молодых ученых Института археологии и этнографии НАН РА** ..... 261

**Аниа Асатрян – Возрождение камерного творчества Тиграна Чухаджяна** ..... 264

### CONTENTS

#### ARTICLES – REPORTS

##### I

**Vahagn Grigoryan – The Problem of Dating the Three Earliest Reliefs of the Echmiadzin Cathedral** ..... 3

**Hrant Abrahamyan – Democracy of the Congresses of the Artsakh Armenians in 1918–1920** ..... 21

**Avetis Harutyunyan – The Activities of Vaspurakan Provincial Autonomous Commissariat (the second government)** ..... 37

**Karen Khachatryan – Preconditions for the Formation of the Military-Defence Industry in Soviet Armenia (the 1920s–1930s)** ..... 53

**Esther Khemchyan – From the History of Tavush Narrators** ..... 66

##### II

**Anna Arevshatyan – The Musical Heritage of Grigor Magistros** ..... 78

**Gagik G. Sargsyan, Husik Melkonyan – Epigraphic Notes – 2** ..... 94

**Hamlet Davtyan – Once More on the Issue of Toponymy of Northern Gugark** ..... 120

**Vazgen Hambartsumyan – The Question on the Genealogical Relations of Armenian and Milyan Languages** ..... 127

**Lusine Hayriyan – Avetik Isahakyan as a Tale-Writer** ..... 147

**Anahit Yahyamasihi (Tehran) – The Response of a Folk Song Composed by Komitas in Iranian Folklore** ..... 156

**Hasmik Galstyan – Belief and Notions of Ghost –Gornapshtiks** ..... 162

|   |     |
|---|-----|
| <b>Narine Shamamyan – Symbolics of Henna Ritual in the Wedding Cycle of Armenians .....</b> | 169 |
|---|-----|

## DISCUSSIONS

|  |     |
|--|-----|
| <b>Emma Petrossyan – The Sacral Rocks Sipan and Sipil (Ishpile) (in Russian) .....</b>   | 179 |
| <b>Samvel L. Grigoryan (Moscow) – The Coronation List of the Chronicle Attributed to Smbat the Constable. Siruhi, Prince of Simanakla (in Russian) .....</b> | 198 |

## BOOK REVIEWS

|   |     |
|---|-----|
| <b>Kamo Alexanyan – Yurik Muradyan. Geography of Civilizations .....</b>  | 211 |
| <b>Anushavan Zakaryan – From the History of Armenian-Ukrainian, Hungarian and Moldovan Relations ( collection of articles and materials) (in Russian) .....</b> | 213 |
| <b>Hamo Sukiassyan – The Struggle of the Armenians for Joining NKAR to Soviet Armenia. Collection of Documents and Materials .....</b>                          | 217 |
| <b>Hasmik Philipossyan – Ararat Aghassyan. Symbolism and Martiros Saryan's Creative Work .....</b>  | 220 |
| <b>Gurgen Karapetyan – Anushavan Zakaryan . Sergey Gorodetsky's Tiflis "Artel of Poets" and the Collection "Akme" (in Russian) .....</b>                        | 226 |
| <b>Armen Karapetyan – H. M. Harutyunyan. New-Bayazet District in 1914–1920 .....</b>  | 229 |
| <b>Henzel Manucharyan – Alexander Safaryan. Ziya Gyokalp and "Foundations of Turkology" .....</b>   | 233 |

## OUR JUBILEES

|   |     |
|---|-----|
| <b>Ashot Melkonyan, Pavel Chobanyan – Academician Vladimir B. Barkhudaryan (to the 85th birth anniversary and 65th scientific-pedagogical activity) .....</b> | 236 |
| <b>Robert Tokhmakhyan – Artem Sargsyan (to the 70th birth anniversary) .....</b>  | 240 |

## OUR HONoured SCHOLARS

|  |     |
|--|-----|
| <b>Aelita Dolukhanyan – Eminent Literary-Critic (to Yeghishe Petrossyan's 100th birth anniversary) .....</b> | 244 |
|--|-----|

## SCIENTIFIC LIFE

|   |     |
|---|-----|
| <b>Armen Petrossyan – The Fourth International Scientific Conference "Armenian Epos and World-Wide Epic Heritage" .....</b>   | 248 |
| <b>Artak Maghalyan, Hamo Sukiassyan – The 33rd Scientific Session of Young Scientific Workers of the Institute of History NAS RA ( dedicated to the 85th anniversary of academician of NAS RA V. B. Barkhudaryan) .....</b> | 250 |
| <b>Margaret Kamalyan – The Seventh Scientific Session of Young Art Critics on Tigran Chukhajyan's 175th birth anniversary .....</b>   | 255 |
| <b>Roman Hovsepyan, Satenik Mkrtchyan, Hamlet Melkumyan – The 13th International Conference of Young Scientists of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA .....</b>   | 261 |
| <b>Anna Assatryan – The Revival of Tigran Chukhajyan's Chamber Works .....</b>  | 264 |

ՀԱՆԴԵՍԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՄԱՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ՝ 100 ԱՄՆ ԴՈԼԱՐ  
(ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐԵՔ ՀԱՄԱՐԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԸ)

---

«Պատմաբանասիրական հանդեսը» վաճառվում է  
Երևանի գրախանությունում

Վերստուգող սրբագրիչ՝ Գայանե Բալայան  
Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Շուշան Բասենցյանի

Խմբագրության հասցեն՝ 375019, Երևան-19, Մարշալ Բագրամյան պող. 24-գ, հեռ. 581872  
Ազգային համար՝ 375019, Երևան-19, պր. Մարշալ Բագրամյան, 24 հ, տել. 581872  
Address: 24G Marshal Baghramian av., 375019, Yerevan, Armenia, tel. 581872

E-MAIL: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru), [patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

---

Հրատ. պատվեր № 410  
Ստորագրված է տպագրության 11.01.2013 թ.:  
Տպագրական 17 մամուլ՝ թուղթ № 1, 70x100:

---

ՀՀ ԳԱԱ տպարան, 375019, Երևան, Մարշալ Բագրամյան պող. 24:

---

Изд. заказ № 410  
Подписано к печати 11.01.2013 г.  
Печ. 17 л. Бумага № 1, 70x100.

---

Типография НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.

*Историко-филологический журнал, 2012, №3, 3–272*

ИНДЕКС 77805

ПАССАРДАУШАРИГЧАЛЫК

3

2012